ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը.

Հարություն Վանյան

Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները.

Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), հունիսի 17-19, 2026 թ.

Հրավիրող կողմը.

Եվրոպայի Խորհուրդ, «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի հրավերով և միջոցներով

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար նախատեսված գործուղումը).

Scanned with CamScanner

Գործուղման նպատակն էր ներկայացնել Եվրոպայի Խորհրդի «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագիրը Բիրմինգհեմի համալսարանի կողմից կազմակերպված աշխատաժողովին, որը վերաբերում էր Եվրոպայում հնագիտության ոլորտի քաղաքականությանը և հնագիտության ազդեցությանը բարեկեցության վրա:

Քննարկված թեմաները.

Քննարկված թեմաներն են՝

1. Եվրոպական Միության, Մեծ Բրիտանիայի և Բելգիայի Թագավորության կողմից տարվող քաղաքականությունները տվյալ ոլորտում:
2. «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագիրը՝ որպես հարթակ իրացնելու նաև հանրային հնագիտությունը և բարեկեցությանը ուղղված միջոցառումների լավագույն օրինակներ (ներկայացվեց իմ կողմից):
3. Դանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Հունգարիայի, Լեհաստանի և Կիպրոսի փորձն ու լավագույն օրինակները քննարկվող հարցի վերաբերյալ:
4. HORIZON 2027 դրամաշնորհային ծրագրին մասնակցելու տեխնիկական պայմանակարգը, դժվարություններն ու խոչընդոտները:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Իմ ելույթում ներկայացրել եմ Եվրոպայի ամենամեծ մասնակցային միջոցառումների շարքի՝ «Եվրոպական ժառանգության օրերի» ստեղծման պատմությունը, ներկա իրավիճակը, հիմնական շեշտադրումները, տարեկան ընտրվող թեմաները, թեմային առնչվող՝ «Եվրոպական ժառանգության օրերի» լավագույն փորձը, ինչպես նաև Հայաստանում մեր կողմից կազմակերպվող

Scanned with CamScanner

միջոցառումներից օրինակներ և կոնկրետ միջոցառումների օրինակների վրա ներկայացում հնագիտության ազդեցությունը բարեկեցության վրա:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովը որոշումների ընդունում չէր ենթադրում իր ձևաչափով:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կազմակերպիչները իմ ելույթից հետո հետաքրքրվեցին հետագա համագործակցությամբ «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի հետ, որի վերաբերյալ առաջիկայում պաշտոնական առաջարկով կդիմեն քարտուղարություն:

Ստորագրությունը, ամսաթիվը:

Պատմության և մշակույթի հուշարձանների
պահպանության վարչության պետ,
«Եվրոպական ժառանգության օրեր»
ծրագրի ազգային համակարգող՝ ***Հարություն Վանյան***

Scanned with CamScanner